Սանասարը ասաց։ — Պապի, տիւ չէ՞ր էտ պաներ տուիր մե։

Ասաց։ — Խա՛, որտի։

— Պապի, ապա էտ պաներ ընչի՞ խամոր ա, որ տիւ տուիր ես մե. մենք խորեր էնք աւապի մէջ։ Էն քէթիր պանի անուն ի՞նչ ա։

59 — Որտի, էն քէթիր, թուր Կեծակին ա։

— Ապա էն ի՞նչ կանեն։

— Էնի երվի էթան կռիւ անեն, կը կապեն ինոնց վերէն, կերթան կռիւ։

60. Լա՛ւ, պապի, էն կլոր պա՞ն ինչ ա։

— Էնի Գուրզն ու Գորզին ա։

— Էն ի՞նչ կանեն։

— Էն էլ ոժով մարթեր կառնեն, կէրթան կռիւ, կը զանեն իրարու, կը սպանեն, կը զանեն պերթեր կաւիրեն։

61 — Ապա էն սրվտակ ոսկո՞ւն ինչ ա։

— Էն էլ զէն ա, կը տնես Ռուռկու Ջալալի վերէն, կը խեծնես։ Ո՛րտի, ես քեզ էլ պան կը տամ, երվի ամբեր կը մրթնեն, տիւ իմանաք, որ նեղ տեղ էք, էտա ցեղ իրարու հընդատ կը խանէք, ասաց, էս կասեմ։ Պապինը անցայտացաւ։

62. Կեացին Աչմու Թակեաւորի քաղաք, մտան ինոնց մտա ոարէն, տասը տարին լմընցաւ Թակեաւոր օրօխկեց Ջանլաթները, էնոնց վիզ կտրեն։ Մէրը էլաց, վարթապետին ասաց։ — Իլի՛ պատարագմ արա, մեզ սրվուԹիւն տու, որ Թակեաւոր մեր վիզն ալ կտրի յէս օր։

63. Վարթապետ պատարագ արեց, սրվուԹիւն առին, Ջալատներ էկան։ Սանասար, Բաղտասար նոտած քիւրսիներու վերէն, կասեն, կը ծծդան։ մէրը կը լայ։

Ներս մտան Ջալատներ, ասաց։ — Յէս օր ծեր վիզը ալ կտրեցնք։

64. Մէր ասաց։ — Մեր վիզը կտրէք, պայց յըմ տղէներին ծեռ կէրթա՞ց, որ վիզը կտրէք։

Ջալատի մէկը ասաց։ — Մեր ծեռն էլ չէրթայ վըր քիւ տղէներին, ապա ի՞նչ անեցնք, Թակեաւոր ասէ, որ ալ կտրեցնք։

65. Մէրը լալէով ասաց։ — Քիչըմ յեսի զրիւցէք, յըմ տղէներ չը վախենան։ մէ քիչ Թոխ ծծդան, տիւ էլ նոտէք, ըռաՀաթէք։

— Զէ՛, ասաց, մե իրաւիւնք չը կայ նոտել։ շուտ արէք, էրթանք տիւս, Թէ չէ, էս տեղ ծեր վիզ կը կտրենք, արուն կը

---

4. Օդ ուԹիւն։